«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **¦Խաղային մեթոդը որպես ներառական կրթության արդյունավետության բարձրացման մեթոդ տարրական դասարաններում§**

ԱՌԱՐԿԱ՝ **¦Մայրենի§, ¦Մաթեմատիկա§**

ՀԵՂԻՆԱԿ՝ **Կարապետյան Պերճուհի**

ՄԱՐԶ՝ **Արագածոտնի մարզ**

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ **Նորաշենի Ռաֆիկ**

Հարությունյանի անվան միջնաարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ---------- 6

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ----------12

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ----------13

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ----------23

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------28

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆԿ----------29

Խաղային մեթոդը որպես ներառական կրթության արդյունավետության բարձրացման մեթոդ տարրական դասարաններում

<<Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը կայծ է՝հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ>>:
Վ.Ա.Սուխոմլինսկի

Ներածություն

Իմ դասարանում ունեմ ԿԱՊԿ ունեցող աշակերտ:Երեխան դպրոց է հաճախել 7 տարեկան հասակում: Նրա մոտ նկատվում է տարիքային զարգացման հապաղում,
խոսքը զարգացած չէ, բառապաշարը աղքատիկ է, չունի հաղորդակցվելու կարողություն,խոսելիս դրսևորում է ամաչկոտություն, սկզբնական շրջանում բացակայում էր նաև աչքի կոնտակտը, ունի վարքի խանգարումներ...

Ծնողի կարծիքով նշված բոլոր խնդիրները երեխայի մոտ առաջացել են համակարգչային կախվածությունից:

Թեև երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային ուսումնառության գործնթացում, բայց ծնողները չեն ցանկանում իրականացնել երեխայի դպրոցական մակարդակի գնահատում:

Հարգելով ծնողի որոշումը՝ ինքնուրույն փորձեցի գտնել մեթոդներ երեխայի հետ աշխատելու համար:Ունենալով փորձառություն ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատելու՝ կարճ ժամանակահատվածում կարողացա լուծում տալ շատ հարցերի:

Այժմ ինձ անհանգստացնում է այն, որ երեխան մեծ դժվարությամբ է ըմբռնում նոր նյութը, չի ցուցաբերում հետաքրքրություն և ակտիվություն դասերի ժամանակ, ուշադրությունը ցրված է:

Հետազոտությանս գլխավոր նպատակն է փնտրել նոր մեթոդներ ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ որոշեցի որպես խթանման միջոց կիրառել խաղային մեթոդը:

Նպատակները՝

- **խաղերի միջոցով բարձրացնել ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտիվացիան,**
- **զարգացնել երեխաների ուշադրությունը,**
- **ակտիվացնել անհամարձակ երեխաներին,**
- **պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը:**

Խնդիրները՝

- **կարողանալ բարելավել սոցիալական և հոգեբանական ներառումը,**
- **ընտանիքին հաղորդակից դարձնել կրթական գործնթացին,**
- **խթանել դասընկերների աջակցությունը:**

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներառական կրթություն

Ներառական կրթությանը ենթադրում է, որ աշակերտները, իրենց ողջ բազմազանությամբ և առանձնահատկություններով, սովորեն կողք կողքի նույն դպրոցում և դասարանում:

Ներառական կրթությունը դիտարկվում է, որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Սակայն ներառական կրթության ներմուծումը ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար է բարենպաստ ազդեցություն ունենում, այլև վերջիններիս նորմալ զարգացող տարեկիցների համար:

Ուսուցման ընդհանուր գործընթացում նորմալ զարգացման ընթացք ունեցող երեխաները, շփվելով հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, ձևավորում են հանդուրժողականություն, ձգտում են օգնել նրանց, իսկ հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ ցածրանում է ագրեսիվության և անհանդուրժողականության ռիսկը: Համատեղ ուսուցման իրականացման փորձը վկայում է, որ այդ բարդ գործընթացը պահանջում է դպրոցի սովորական կենսաձևի վերակառուցում:

Ներառական կրթության ներմուծումը հանրակրթական դպրոցներ մեծ փոփոխության է ենթարկում նաև մանկավարժի աշխատանքը: Հոգեբանական հարմարման տեսանկյունից անհրաժեշտ է դառնում կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին մանկավարժների, աշակերտների և ծնողների կողմից ընդունմանը, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններով սովորողի համար պայմաններ ստեղծել՝ ընդգրկվելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատությունում գործող նորմերն ու կանոնները:

Ներառական կրթության համընդհանուր սկզբունքները.

- Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, ոչ թե երեխայի հարմարեցում:
- Ներառումը երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց ընտանիքներում, առանց ընտանիքից մեկուսանալու հաճախել մոտակա դպրոցը:
- Ներառական կրթությունը կարող է բարձրացնել բոլորի կրթության որակը:

Ներառական կրթության ներդրման մարտահրավերները՝

- մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող մասնագետների փորձառության պակաս կամ բացակայություն,
- առարկայական ուսուցիչների դասավանդման մեջ ներառական մոտեցումների, մեթոդների պակաս,
- տնօրինության կողմից դպրոցներում ներառման գործընթացի արդյունավետ կազմակերպում և կառավարում,
- ներառականության գաղափարի սխալ ընկալում,
- ֆիզիկական միջավայրի ոչ համարժեք պայմաններ:

Միտչելի ներառական կրթության մոդելը



Խաղի ազդեցությունը կրտսեր աշակերտների մոտ ճանաչողական հետաքրքրության ձևավորման վրա

Խաղը երեխայի առաջատար գործունեությունն է և զարգացման հիմքը: Երեխայի համար խաղի անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ նա ակտիվ էակ է: Նրա մեջ բնորոշ է հետաքրքրասիրությունը:

Խաղը մեծ նշանակություն ունի տարրական դասարանների երեխաների կյանքում: Ս.Ա. Շաթսկին, բարձր գնահատելով խաղի կարևորությունը, գրել է.

Դ.Բ. Էլկոնինը տալիս է խաղի հետևյալ սահմանումը. «Մարդկային խաղը այնպիսի գործունեություն է, որի ընթացքում մարդկանց միջև սոցիալական հարաբերությունները վերստեղծվում են անմիջականորեն օգտա- գործական գործունեության պայմաններից դուրս»:Բացի այդ, խաղը երեխաների մտավոր և բարոյական դաստիարակության ամենակարևոր միջոցներից մեկն է. սա միջոց է, որը հեռացնում է աշակերտի անձի համար տհաճ կամ արգելված փորձառությունները:

Ինչպես գիտեք, ուսուցման մոտիվացիան մեծ դեր է խաղում կրթական գործընթացի կազմակերպման գործում՝

. նպաստում է մտածողության ակտիվացմանը,

. հետաքրքրություն է առաջացնում գործունեության այս կամ այն տեսակի նկատմամբ, այս կամ այն վարժությունների կատարման նկատմամբ:

Հայտնի է, որ խաղը մարդկանց իրական գործնական գործունեության պայմանական վերարտադրությունն է, պայմաններ է ստեղծում իրական հաղորդակցության համար: Այստեղ սովորելու արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է մոտիվացիայի պայթյունով, առարկայի նկատմամբ հետաքրքրության աճով:

.Խաղը ակտիվացնում է երեխաների ՝ միմյանց հետ շփվելու ցանկությունը:

.Քանդում է ուսուցչի և աշակերտի միջև ավանդական պատնեշը:

.Հնարավորություն է տալիս երկչոտ, անապահով աշակերտներին և դրանով իսկ հաղթահարում անորոշության պատնեշը: Եվ դա շատ արժե: Սովորական քննարկման ժամանակ սովորողների առաջնորդները հակված են տիրել նախաձեռնությանը, մինչդեռ երկչոտները նախընտրում են լռել:

. Խաղի մեջ բոլորը դեր են ստանում կամ բոլորը մասնակցում են, պետք է լինեն ակտիվ գործընկեր:

.Խաղերում դպրոցականները տիրապետում են հաղորդակցության այնպիսի տարրերի, ինչպիսիք են խոսակցություն սկսելու, նրան աջակցելու, զրուցակցին ընդհատելու, ճիշտ ժամանակին համաձայնվելու նրա կարծիքը կամ հերքելու այն, զրուցակցին նպատակաուղղված լսելու, հստակեցնող հարցեր տալու ունակությունը և այլն:

.Խաղերը դրական ազդեցություն են ունենում կրտսեր աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման վրա:

. Զարգացնում է երեխայի երևակայությունը:

. Խաղերը նպաստում են այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են անկախությունը, նախաձեռնողականությունը:

. խթանում է կոլեկտիվիզմի զգացում:

. Երեխան սովորում է պահպանել անհրաժեշտ վարքի նորմերը:

Յուրաքանչյուր առաջադրանք-խաղ ներառում է, որպես անփոխարինելի պայման, սեփական վարքը ուրիշների վարքագծի հետ համակարգելու համար:

Լեհ հետազոտող Ստեֆան Շումանը նշում է, որ խաղը երեխայի գործունեության բնորոշ և յուրահատուկ ձև է, որի շնորհիվ նա սովորում և փորձ է ձեռք բերում: Շումանը մատնանշեց այն փաստը, որ խաղը խթանում է երեխայի ամենաբարձր հուզական փորձառությունները և ակտիվացնում այն ամենախորը ձևով:

Որո՞նք են խաղերի հիմնական պահանջները:

1. Խաղը պետք է խթանի ուսուցման մոտիվացիան, առաջացնի սովորողների մոտ առաջադրանքը լավ կատարելու հետաքրքրություն և ցանկություն:

2. Խաղը պետք է լավ պատրաստված լինի ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի առումով, հստակ կազմակերպված:

3. Խաղը պետք է ընդունվի ամբողջ խմբի կողմից:

4. Խաղը կազմակերպված է այնպես, որ սովորողները կարողանան օգտագործել մշակված նյութը:

5. Ուսուցիչն ինքն անշուշտ հավատում է խաղին, դրա արդյունավետությանը: Միայն այս պայմանով նա կկարողանա հասնել լավ արդյունքների:

Այն, անշուշտ, պետք է իրականացվի ընկերական, ստեղծագործական մթնոլորտում ՝ դպրոցականների մոտ գոհունակության և ուրախության զգացում առաջացնելու համար: Որքան աշակերտն իրեն ավելի ազատ զգա խաղի մեջ, այնքան ավելի նախաձեռնող կլինի հաղորդակցության մեջ: Ժամանակի ընթացքում նա կունենա ինքնավստահության զգացում: Այն, որ նա կարող է տարբեր դերեր կատարել:

Այսպիսով, ուսուցչի համար խաղը կարող է դառնալ երեխաների ճանաչողական կարողությունները բարձրացնելու, նրանց մեջ մտավոր գործունեության կայուն հետաքրքրություն և կարիքը սերմանելու, դպրոցում նշանակալից մտավոր և հոգեֆիզիոլոգիական գործառույթների կատարելագործման և ընդհանրապես ուսուցման հաջողություններից մեկը:

https://sato-1.ru/hy/tutors/vliyanie-igry-na-formirovaniya-poznavatelnogo-interesa-v-mladshih-shkolnikov/

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ Արագածոտնի մարզի Նորաշենի Ռաֆիկ Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց ի 1-ին դասարանում:Դա իմ դասվարական դասարանն է:

Ընտրել եմ իմ դասարանը, քանի որ իմ դասարանում կա ԿԱՊԿ ունեցող աշակերտ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Փորձարարական դասի պլան 1

https://app.wisemapping.com/c/maps/1226402/public

Փորձարարական դասի պլան 2

Դասարան -Առաջին

Դասի տևողություն - 45 ր.

Առարկա - ¦Մայրենի§

Դասի տիպը- Ուսուցման դաս

Դասի թեման- «Տտ» հնչյուն – տառերի ուսուցումը

Դասի նպատակը՝

- **ամրապնդել անցած հնչյուն-տառերը,**
- **ուսուցանել «Տտ» հնչյուն - տառը,**
- **պատմություն հյուսել թեմատիկ նկարի շուրջ,**
- **զարգացնել բանավոր խոսքը,**
- **խթանել կարդալու սկզբնական կարողությունները,**
- **ամրակայել պատմություն - տառ շղթան,**
- **ամրապնդել միավանկ և բազմավանկ բառերի մասին ունեցած գիտելիքները:**

ԿԱՊԿ ունեցող աշակերտ՝

- **ձևավորել բառակապակցություններ կազմելու, պարզ նախադասություններով միտքը արտահայտելու ունակություններ,**
- **շարունակել զարգացնել հնչյունային լսողությունը,**
- **խթանել հնչյուններն ու տառերը ճիշտ համադրելու կարողությունները,**
- **խաղային մեթոդներով հետաքրքրություն առաջացնել դասի նկատմամբ,**
- **ապահովել երեխայի ներգրավվածությունը դասին,**

- ձևավորել ընկերների հետ հաղորդակցվելու,շփվելու,համագործակցելու ունակություններ:

Դասի խնդիրները

- Կսովորեն գրել տ տառով բառեր, կազմել բառակապակցություններ, նախադասություններ,
- կկառուցեն բանավոր խոսք՝ նկարի բովանդակության շուրջ,
- կանջատեն նախադասություն պատմությունից,
- Կմեկնաբանեն նախադասությունը,
- կարողանան նախադասությունից անջատել մեկնաբառը,
- կսովորեն կարդալ բնագրիը,
- կարողանան տարբերել և խմբավորել իրենց անցած ձայնավոր և բաղաձայն հնչյուն-տառերը,
- կարողանան տրված տառերը դասավորելով ստանալ բառ,
- կարողանան հայացքի մեկ ընդգրկումով կարդալ տառակապակցությունները, միավանկ բառերը:

ԿԱՊԿ ունեցող աշակերտը՝

- կսովորի Տտ հնչյուն – տառերը,
- կարողանա հստակորեն և ճիշտ արտաբերել սովորած հնյունները, դրանք գրառել համապատասխան տառերով,
- կմասնակցի թեմատիկ նկարի շուրջ կազմակերպված զրույցուին,
- կփորձի գուշակել հանելուկը,
- իմանա խմբում աշխատելու վարքի կանոնները,
- կարողանա համագործակցել, շփվել համադասարանցիների հետ,
- մի քանի բառով ասի, թե ինչ աշխատանք են արել դասի ժամանակ:

Մեթոդները

Խաղային մեթոդ,զրույցի մեթոդ,խմբավորման մեթոդ,համագործակցային մեթոդ,խմբային աշխատանքի մեթոդ,ԿԱՊԿ ունեցող աշակերտի համար կիրառել նաև «Շրջված դասարան» մոդելը:

Դասի կահավորումը-Տպագիր և ձեռագիր Տտ տառի պատկերները , համակարգիչ, շարժական տառեր, նկարներով քարտեր:

Դասի ընթացքը

Խթանում՝

Դասը սկսել«Ձայնավոր և բաղաձայն» համակարգչային խաղով:Երեխաները պետք է կարողանան խմբավորել իրենց անցած հնչյուն- տառերը:

https://learningapps.org/14090470

Աշակերտներին դիմել հանելուկով `
Ձեռքեր չունի,
Ներկեր չունի,
Դաշտն է ներկում
Հազար գույնի:

Երեխաները կռահում են, թե տարվա որ եղանակն է :
Թվարկում են, թե ինչ բերք ու բարիք է տալիս մեզ աշունը:
Կատարում են **«Ջան, ջան, ջան, աշուն է»** երգը:

«Տանձ» բառը ենթարկել հնչյունային վերլուծության՝

.Աշակերտների միջոցով նշվում է քանի հնչյուն, քանի տառ ,
քանի վանկ ունի բառը, տ-ն որտե՞ղ է գտնվում: Պարզում են տ-ն ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն (ինչու՞):
Այնուհետև ասվում է բառեր, անուններ, կենդանիներ, հատուկ անուններ:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաները ստեղծում են պատմություն թեմատիկ նկարի շուրջը: Պատմությունից առանձնացնում են տ պարունակող բառեր՝ տանձ, տերև,տանձենի,տուն,տատ,տանիք, աստիճան, Տիգրան: Այս բառերում տ հնչյունը լսելուց հետո առանձնացվում են բառերը, ենթարկվում հնչյունային վերլուծության:
Ուսուցիչը ցույց է տալիս տ հնչյունի տառերը ՝ տ Տ: Երեխաների ուշադրությունը հրավիրում է այն բանին, որ տ-ն նկարված է տերևների տեսքով:
Լսել «Տ» տառի երգը:

<u>Խաղ՝ «Գտիր ծանոթ տառը»</u>

Բացվում է գրատախտակի վարագույրները: Քանի որ Անգետիկը տառերը չգիտի, երեխաները գրատախտակին փակցված տառերից ընտրում են իրենց անցած տառերը,ցույց տալիս Անգետիկին, ասում, թե որ տառն է և տեղադրում

մեծադիր տառադարանի համապատասխան գրպանիկում:Այս աշխատանքում ընդգրկել նաև ԿԱՊԿ ունեցող երեխային:

Խաղ-մրցույթի ձևով է անցկացվում նաև բառաշարքերի ընթերցումը /իրականացվում է ընտրովի ընթերցանություն,կարող են նաև տեքստի բառերից օգտվել/:Աշխատանքը կատարում են շարքերով:Առաջին շարքի երեխաները ընտրում և կարդում են միայն միավանկ , երկրորդ շարքի երեխաները՝երկվանկ, իսկ երրորդ շարքի երեխաները՝եռավանկ բառերը: Խրախուսվում են ճիշտ պատասխանները:

ԿԱՊԿ ունեցող երեխային ընդգրկել առաջին շարքում:Ընկերների օգնությամբ կընտրի միավանկ բառ և կկարդա:Վերջում կկարդա նաև տառակապակցությունները: Բնագիրը կարդում է ուսուցչուհին, բացատրում: Երեխաներից մի քանիսը կարդում են, մյուսները շարունակում:

Ֆիզկուլտդադար (5 րոպե) «Եկե՛ք պարենք»: Ձեռքերը դնենք գոտկատեղին: Հենվել ոտքերի թաթերին, հետո կրունկներին և մի ոտքով խփել հատակին: Շնչել համաչափ: Կատարել վարժությունը, փոխելով ոտքը նախ աջով խփել, հետո՝ ձախով:

Կշռադատման փուլ՝դիդակտիկ խաղ «Գտիր թաքնված բառը»

Աշակերտներին բաժանել 4 խմբի:Երեխաները ստանում են նկարներով փոքրիկ քարտեր, իրենց տառադարաններից հանում են այն տառերը, որոնցով սկսվում են են նկար-բառերը:Հետո փորձում են այդ տառերով կազմել նոր բառ: Խրախուսվում են ճիշտ աշխատանքները:Առաջադրանքների բարդությունը կախված է ըստ խմբերում ընդգրկված աշակերտների ընդունակությունների:

Գրավոր աշխատանք .կատարել «Գրատետր -2 »-ի համապատասխան վարժությունները:

ԿԱՊԿ ունեցող երեխան նախ ծեփում է նորածանոթ տառը, հետո՝ գրում:

Փորձարարական դասի պլան 3

Ուսուցչի անունը՝ Պերճուհի Կարապեյան

Ամիս, ամսաթիվ՝09.09.2022 թ.

Առարկա՝ ¦Մայրենի§

Դասարան՝ Առաջին

Դասի թեման՝ «Անցած հնչյուն-տառերի ամրապնդում»

Դասի տեսակը՝ Ամրապնդման դաս

Դասի նպատակը՝

- **ամրապնդել անցած հնչյուն-տառերը,**
- **ամրապնդել ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին ունեցած գիտելիքները,**
- **ամրապնդել միավանկ և բազմավանկ բառերի մասին ունեցած գիտելիքները,**
- **զարգացնել բանավոր խոսքը,**
- **խաղերի միջոցով ձևավորել արագ կողմնորոշվելու հատկություններ,**
- **ձևավորել ընկերներին օգնելու պատրաստակամության ունակություններ:**

ԿԱՊԿ ունեցող աշակերտ՝

- **շարունակել զարգացնել հնչյունային լսողությունը,**
- **զարգացնել գրելու, կարդալու նախնական կարողությունները,**
- **զարգացնել բանավոր խոսքը, հարստացնել բառապաշարը ,**
- **խաղերի միջոցով ապահովել երեխայի մոտիվացումը դասին,**
- **ձևավորել ինքնասպասարկման ունակություններ,**
- **շարունակաբար իրականացնել ճանաչողական, դաստիարակչական զարգացնող աշխատանքներ՝նպաստելով երեխայի անձի ձևավորմանը:**

Դասի խնդիրները՝

- **իմանան մեծատառի գրության մասին նախնական գիտելիքներ,**
- **կարողանան տրված բառի սկզբից կամ վերջից մեկ տառ ավելացնելով ստանալ նոր բառ,**
- **կարողանան տրված տառերը դասավորելով ստանալ բառ,**
- **կարողանան տրված վանկերը միացնելով ստանալ բառեր, կազմեն բառակապակցություններ, նախադասություններ:**

ԿԱՊԿ ունեցող աշակերտը՝

- **կիմանա տպագիր և ձեռագիր տառերը կարդալ և գրել,**
- **կկապակցի անցած հնչյուն-տառերի հետ, վանկեր, բառեր կկազմի ու կգրի,**
- **կմասնակցի խաղերին,խմբային աշխատանքներին,**
- **կհամագործակցի ընկերների հետ:**

Դասի կահավորումը՝ Մեծադիր տառադարան, պատկերազարդ այբուբեն, ծրարներ,նկարներով քարտեր, գունավոր կավիճներ, ՏՀՏ գործիքներով խաղեր:

Դասի ընթացքը

Կազմակերպական պահ-

Հին նյութի հարցում, անհասկանալի հարցերի վեր հանում:

Խթանման փուլ՝

Մինչ ամփոփման դասին անցնելը ձայնավորների և բաղաձայնների վերաբերյալ learningapps.org գործիքով խաղ անցկացնել:

https://learningapps.org/19680918

Իմաստի ընկալման փուլ՝

Զրույցի միջոցով ասել աշակերտներին, որ նոր տառ չեն անցնելու, փոխարենը խաղերի միջոցով կկրկնեն անցած տառերը, դրանցով բառեր և նախադասություններ կկազմեն, հանելուկներ կգուշակեն:

Խաղ 1. «Գտիր բառի կեսը»

Յուրաքանչյուր զույգին տալ 1-ական ծրար,որոնց մեջ լցված են 3-4 բառի վանկերը՝կտրտված:Երեխաները ծրարի մեջ գտնվող վանկերով կազմում են բառեր և կարդում:Հաղթում է այն զույգը,որը արագ կկազմի բառերը և ճիշտ կկարդա:Ընթերցումը սկսվում է միայն այն ժամանակ, երբ բոլոր զույգերը վերջացրել են բառերը կազմել:

Խաղ 2. «Հանելուկի գուշակում»

1-4 հաշվով երեխաները բաժանվում են խմբերի:Ուսուցչուհին հանելուկների արկղիկից հանում և կարդում է հանելուկը, իսկ երեխաները լուռ գուշակում են հանելուկի պատասխանը և տառադարանից հանում այն տառը,որով սկսվում է այդ բառը:վերջում փորձում են տառերը դասավորել այնպես,որ բառ ստացվի::Հաղթում է այն խումբը,որը առաջինը և ճիշտ կկազմի:Հարկավոր է թողնել,որ բոլոր աշակերտները կազմեն բառը, նոր երեխաներին կարդալ հարցնել /ի,ր,տ,ս- սիրտ/:

Այն որ հսկա թռչունն է, Այն ինչն է, ինչը.

Երբ չի թռչում,ննջում է, Գազարի վերջում է,

Երբ շնչում է, թռչում է:/ինքնաթիռ/ Ռոպեի՝ սկզբում:/ր տառը/

Մեր դաշտերն է նա փորում, Լաց է լինում մորթողը,

Տասը եզան գործ կատարում:/տրակտոր/ Լաց չի լինում մորթվողը:/սոխ/

Ֆիզկուլտ դադար:

Խաղ 3: «Ավելացրու մեկ տառ և ստացիր նոր բառ»

Խմբերին առաջարկել կազմել ուր, ուս, սա բառերը:Այնուհետև այդ բառերի սկզբից կամ վերջից ավելացնեն իրենց անցած տառերից մեկ տառ այնպես,որ ստացվի նոր բառ/ տուր, սուր, սուս, սար/:

կշռադատման փուլ

Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ:

Տետրերում թելադրությամբ գրել այն բոլոր բառերը,որոնք կազմեցին խաղերի ընթացքում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փորձարարական դաս 1-ի վերլուծություն

Մաթեմատիկա

Դասն անցկացրի ԽԻԿ համակարգով:Խաղային մեթոդը կիրառեց խթանման և կշռադատման փուլերում:Դասն անցավ հետաքրքիր, մեծ էր աշակերտների ոգևորությունը: ԿԱՊԿ ունեցող աշակերտը շատ էր ոգևորվել հատկապես ՏՀՏ խաղի ժամանակ:Քանի որ խաղի տևողությունը կարճ էր, մեկ անգամ ևս միացրի և թույլ տվեցի նրան կրկին խաղալ:

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
.Դասին մասնակցեցին բոլոր աշակերտները: .Կիրառված ՏՀՏ գործիքն օգնեց դասանյութի ամրապնդմանը, գիրք-տետրերում ինքնուրույն աշխատելիս երեխաները ոչ մի սխալ թույլ չէին տվել: .Դասի սկզբում ԿԱՊԿ ունեցող աշակերտը շատ էր ոգևորվել ՏՀՏ գործիքով խաղից,անընդհատ ասում էր՝ կոկորդիլոս խաղամ:	.Երեխաների ոգևորվածության պատճառով դասի սկզբում մի փոքր աղմուկ էր: .ԿԱՊԿ ունեցող աշակերտը խմբային աշխատանքի ժամանակ պասիվ էր, խուսափում է ընկերների հետ համագործակցել,չէր կարողանում պահպանել վարքի կանոնները: Դեռևս խուսափում է ընկերների հետ համագործակցել:

Կփորձեմ մյուս դասերի ընթացքում շտկել բացթողումները:

Դասին ներկա էին տնօրենը, ուսմասվարը, ուսուցիչները:

Փորձարարական դաս 2-ի վերլուծություն

Մայրենի

Իմ երկրորդ փորձարարական դասը կրկին անցկացրել եմ առաջին դասարանում՝ մայրենիի դասաժամին:

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը

.Բոլոր աշակերտները մոտիվացված էին դասին: .Դասի սկզբում ՏՀՏ գործիքով՝ **Learningapps.org** խաղ խաղացինք,որին սիրով մասնակցեցին բոլորը: .Բոլորն էլ հրաշալի յուրացրին դասը: .Հաշվի առնելով ԿԱՊԿ ունեցող աշակերտի նախասիրությունները՝ դասի մեջ ընդգրկել էի երգեր, որը մեծ ոգևորություն պատճառեց նրան: .Այս դասին արդեն ինքն էր ցանկանում ընկերների հետ մասնակցել խմբային աշխատանքի ձևով անցկացվող խաղին:Փոքրիկ տեղաշարժ էր նկատվում համագործակցության հետ կապված:Չնայած այն հանգամանքին,որ նա ավելի շատ խանգարում էր ընկերներին, բոլորն էլ ուրախ էին նրա մասնակցության համար:Դասընկերները ծափերով խրախուսում են նրա թեկուզ փոքրիկ ձեռքբերումները:	.Կարելի էր դասին ընդգրկել նաև ուսուցչի օգնականին ԿԱՊԿ ունեցող աշակերտի հետ դասագրքով աշխատելու համար: .Թույլ կողմերից էր նաև այն, որ չկարողացանք տեղավորվել ժամանակի մեջ և գրուսուցումը տեղափոխեցինք հաջորդ ժամին:

Փորձարարական դաս 3-ի վերլուծություն

Մայրենի

Իմ երրորդ փորձարարական դասը կրկին անցկացրել եմ առաջին դասարանում՝ մայրենիի դասաժամին:

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
.Ամրապնդման դասը հնարավորություն տվեց գրեթե ամբողջ դասն անցկացնել խաղերի ձևով:Բոլոր աշակերտները մոտիվացված էին դասին, ոգևորված, բարձր էր մրցակցային ոգին:Արագ էին կողնորոշվում: .ԿԱՊԿ ունեցող աշակերտը ավելի ուշադիր էր դասին, արդեն կարողանում էր որոշակի կանոնների հետևել, փորձում էր համագործակցության եզրեր գտնել ընկերների հետ:Մի փոքր դանդաղ,բայց կատարում էր հրահանգները:	Թույլ կողմերից է այն, որ դեռևս դասարանները հագեցած չեն համապատասխան տեխնիկայով, երեխաները լարվում էին կամ մի փոքր մոտենում,որ մասնակից լինեին ՏՀՏ խաղին: .ԿԱՊԿ ունեցող աշակերտի մոտ դեռևս բացակայում է ինքնուրույնության որոշ դրսևորումներ ինքնասպասարկման հետ կապված:

Տնօրենը, ուսմասվարը, այլ ուսուցիչներ իմ դասերին ներկա են եղել:Նրանց ևս հետաքրքիր էր, թե ԿԱՊԿ ունեցող աշակերտի վրա ինչ դրական ազդեցություն կունենա կարճ ժամանակահատվածում իրականացված հետազոտության փորձարկումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



Տարրական դասարաններում ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու լավագույն խթանման միջոցը խաղային մեթոդն է: Իհարկե, ԿԱՊԿ ունեցող երեխաների դեպքում շատ կարևոր են անմիջական շփում պահանջող դիդակտիկ խաղերը, բայց ժամանակակից աշխարհում առանց ՏՀՏ գործիքների կիրառման անհնար է հասնել ցանկալի արդյունքի:Պետք է հաշվի առնել ոչ միայն ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքները, այլ նաև նրանց նախասիրությունները, անհատական առանձնահատկությունները:

Այս փորձարկումների ժամանակ ես կարողացա խաղերի միջոցով բարձրացնել ոչ միայն ԿԱՊԿ ունեցող երեխայի, այլ նաև մյուս աշակերտների մոտիվացիան: զարգացնել նրանց ուշադրությունը, ակտիվացնել անհամարձակ երեխաներին: Ինչպես ասում են՝ներառական կրթությունը կարող է բարձրացնել բոլորի կրթության որակը:

Ճիշտ պլանավորելով և համակարգելով սեփական աշխատանքս,կարողացա բարելավել սոցիալական և հոգեբանական որոշ դժվարություններ, ընտանիքին հաղորդակից դարձնել կրթական գործընթացին և խթանել դասընկերների աջակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

https://elearning.iedf.am/course/view.php?id=720

https://sato-1.ru/hy/tutors/vliyanie-igry-na-formirovaniya-poznavatelnogo-interesa-v-mladshih-shkolnikov/